I

ՄԵԾՆ ԱՐՏԱՇԵՍ ԱՌԱՋԻՆԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐՈՒՄ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի…»[*]:

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո (մ. թ. ա. 323 թ.) նրա նվաճած երկրները բաժանվեցին զորավարների (դիադոխների) միջև: Մեծ մասը՝ գրեթե բոլոր ասիական տարածքները, ժառանգեց Սելևկոս Նիկատորը (մ. թ. ա. 312–281 թթ.): Վերջինիս՝ Սելևկյան կայսրության մեջ մտնող հայկական պետությունները՝ Մեծ Հայքը, Ծոփքը, Փոքր Հայքը, Կապադովկիան, Պոնտոսը, Ատրպատականը, պահպանում էին ներքին ինքնավարությունը, կառավարվում իրենց թագավորների կողմից: Սելևկյան տերությունը մ. թ. ա. III դարում, երկպառակությունների, ապստամբությունների ու մշտական պատերազմների թատերաբեմ դառնալով՝ թուլացել էր: Նրանից անջատվեցին Բակտրիան, Պարթևստանը և այլ տարածքներ: Անտիոքոս III Մեծը (մ. թ. ա. 223–187 թթ.) փորձեց վերականգնել կայսրության երբեմնի հզորությունը: Մ. թ. ա. 202–201 թթ. նա ստրատեգոս Արտաշեսին[2] Մեծ Հայքի, Զարեհին Ծոփքի ստրատեգոսներ (կառավարիչներ) նշանակեց և զորքով Հայաստան ուղղարկեց, որը կառավարում էր Երվանդ Վերջինը: Մովսես Խորենացու վկայության համաձայն՝ դաժան զինաբախումներ են տեղի ունենում Երվանդի և Արտաշեսի միջև: Երվանդը սպանվում է: «Բայց Սմբատայ գիշերային գհետ Երուանդայ եկեալ սակաւ վաշտականաւ՝ զդուռն քաղաքին պահէր մինչև ի գալն Արտաշիսի և զօրացն

[*] *Մ ո վ ս է ս Խ ո ր է ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նմանահանութիւն), Լրացումները Ա. Բ. Սարգսեանի (այսուհետև՝ Մ ո վ ս է ս Խ ո ր է ն ա ց ի), Երևան, 1991 (1913), I, Գ:*

[1] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (66 թ. մ. թ.).– Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 106:*

[2] *Գ. Տ ի ր ա ց յ ա ն. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն. մ. թ. III–II դարերի պատմության մասին.– «Բանբեր մատենադարանի», -6, Երևան, 1962, էջ 17,* Э. Б и к е р м а н. Государство Селевкидов. М., 1985, с. 156.

ամենեցուն: Եւ ի մարտնչել քաջացն ընդ ամրոցին՝ անձնատուրք եղեն մարդիկ ամրոցին, եւ բացին զդուռն քաղաքին: Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ եհար վաղերբ զգլուխն Երուանդայ, և ցրուեաց զաղիւղն ի յատակս տանն և այսպիսի ջախմամբ վախճանեցաւ, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան»[3]: Մովսես Խորենացին հավաստում է. «Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիմպ քուրմ Հանւոյ. զրող մեհենական պատմութեանց, և զայլ բազում գործս՝զոր ասել կայ մեզ առաջի, որում և Պարսից մատեանքն վկայեն և Հայոց երգք վիպասանաց»[4]: Հ. Մանանդյանը գտնում է, որ Երվանդի սպանության մասին վկայված է նաև Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկում. «Երվանդի մասին այդ տխուր լուրը հաղորդում է Փիլադելփոսին, ըստ երևույթին, Երվանդի քույր թագուհուն, Նումենիոսը: … Երվանդի մասին տխուր լուրը «չէ պարունակում ոչ մի անփառունակ բան», որ նրան «սպանել են զինվորները» և որ նա «շունչը փչել է զենքը ձեռին», ըստ որում «նորագահանիստ Հայաստան երկրին տիրապետել են թշնամիները»[5]:

Անտիոքոս III-ի արշավանքները արևելքում հաղթանակով են պսակվում: Ամրապնդվում են կայսրության դիրքերը: Այդուհանդերձ Անտիոք III-ը չկարողացավ դիմակայել հռոմեական բանակին: Մ. թ. ա. 191 թ. Անտիոքոս III-ի նավատորմը հռոմեացիներից ջախջախիչ պարտություն կրեց Թերմոպիլում: Մ. թ. ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում Անտիոքոս III-ը, չնայած հռոմեական բանակից կրկնակի ավելի զորքերին, նորից խայտառակ պարտություն կրեց[6]: Մ. թ. ա. 188 թ. Ապամեայի պայմանագրով ազդարարվում է սելևկյան կայսրության անկման սկիզբը[7]:

Արմենիայի ստրատեգոսներ Արտաշեսն ու Զարեհը, օգտվելով պատերազմի ելքից, մ. թ. ա. 189 թ. անցնում են հռոմեացիների կողմը և իրենց հռչակում անկախ թագավորներ: Տարածքով ամենամեծը Մեծ Հայքն էր: Հույն պատմիչ Պոլիբիոսը նշում է, որ «Արմենիայի մեծագույն մասի կառավարիչն է Արտաշեսը»[8]:

Ըստ Ստրաբոնի և Պլուտարքոսի՝ 189/188 թթ. Արտաշեսի արքունիքում ապաստանել էր Անտիոքոս Մեծի խորհրդական, նշանավոր զորավար, Հռոմի ոխերիմ թշնամի Հանիբալը[9]: Ի Շիֆմանը ենթադրում է, որ Ստրաբոնը (XI, XIV, 6) և Պլուտարքոսը (Luc. XXXII) պատճառ չունեին կեղծելու և Արտաշատի հիմնադրումը կապելու Հանիբալի անվան հետ: Ուստի, նա գտնում է, որ Արտաշատը հիմնադրվել է մ. թ. ա. 189/8 թթ.: Մենք ընդունելի ենք համարում Ի. Շիֆմանի կարծիքը, գտնելով, որ Հանիբալը, իրոք, կարող էր լինել Հայաստանում, և Արտաշես Առաջինի արքունիքում նույնպես կատարել խորհրդականի դեր:

---

[3] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի. II, ԽԶ:*

[4] *Նույն տեղում, II, ԽԸ:*

[5] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946, էջ 26–27:*

[6] Г. Б е н г т с о н. Правители эпохи эллинизма. М., 1982, с. 220.

[7] *Տե՛ս* Polyb, XXV, *2, 12.*

[8] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության…, էջ 120:*

[9] И. Ш. Ш и ф м а н. Ганнибал в Армении.– ИФЖ, 1980, ¹ 4, с. 257–261. *Տե՛ս նաև Diod., XXXI, 17a.*

Բնականաբար, Հանիբալը ժամանակի ամենահզոր հռոմեական բանակի մարտավարությանը քաջածանոթ լինելով՝ առաջին հերթին վերակազմավորվելու էր հայկական բանակը: Դա նպաստելու էր Արտաշեսին Մեծ Հայքի հարևանությամբ գտնվող երկրներից գրավել 15 նահանգ և միացնել Մեծ Հայքին: Արտաշեսը անցավ նաև Կուր գետի ձախ ափը ու նվաճեց հողեր: Այդ առիթով Ստրաբոնը գրում է. «Պատմում են, Արմենիան եղել է առաջ փոքր և մեծացել է Արտաքսիասի (Արտաշեսի) և Զարիադրիսի (Զարեհի) ձեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի զորավարներն էին և նրա անկումից հետո թագավորեցին՝ Զարեհը Ծոփքի, Ակիլիսենեսի, Օդոմանտիսի և մի քանի այլ գավառներում, Արտաշեսը՝ Արտաշատի շուրջը գտնվող երկրի վրա: Սրանք ընդարձակեցին իրենց երկրների սահմանները և գրավեցին շրջակա ժողովուրդներից հետևյալ շրջանները. մեդացիներից՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Բոսորոպեդան, իբերներից՝ Պարիադրեսի լեռնալանջերը, Խորձենեն և Գոգարենեն, որ գտնվում է Կուր գետի մյուս կողմում, խալյուբներից և մոսինոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասերն են, կատառոններից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի կողմերը գտնվող երկիրը և ասորիներից՝ Տամորիտիսը: Այնպես որ բոլորը միալեզու եղան»[10]:

Հանիբալը կարող էր օգնել նաև Արտաշատ մայրաքաղաքի տեղի ընտրության հարցում, ընդհանուր գծերով ներկայացնել հատակագիծը և նույնիսկ սկզբնական շրջանում մասնակցել աշխատանքներին: Մանավանդ եթե ի նկատի ունենանք, որ Արտաշատի ուրարտական միջնաբերդի պարիսպները և այլ շինություններ այդ ժամանակ պետք է դեռևս բավականին լավ պահպանված լինեին: Ինչ վերաբերում է Հանիբալի Հայաստանից շուտ հեռանալուն, ապա, հավանաբար, պատճառներից մեկն այն է, որ մ. թ. ա. 188 թ. Ապամեայի հաշտության պայմանագրի կետերից մեկը Հանիբալին հռոմեացիներին հանձնելն էր: Իսկ Մագնեսիայի ճակատամարտից հետո Արտաշեսը բարեկամական հարաբերությունների մեջ էր հռոմեացիների հետ (Strabo, XI, 14, 15):

Արտաշեսյան արքայատան հիմնադիր Արտաշես Առաջինը Հայաստանի քաղաքական ու ռազմական ամենախոշոր գործիչն էր, որը, սակայն, պատմագիտության մեջ չի ստացել իր արժանի գնահատականը[11]: Արտաշես Առաջին արքայի օրոք ձևավորվեց պատմական Մեծ Հայքը Հայկական լեռնաշխարհում: Այն ընդգրկում էր Հյուսիսային Միջագետքից մինչև Կուր գետը, Ատրպատականից մինչև Ծոփք և Փոքր Հայք ընկած տարածքները:

Հույն և լատին մատենագիրների բնութագրումների հետևողությամբ Ղևոնդ Ալիշանը դառնալով Արտաշես Առաջին հզոր արքայի աշխարհակալ արքա լինելու հանգամանքին՝ գրել է. «Յոյն և լատին հեղինակաց պատմածներն Տիգրանայ՝ Արտաշեսի որդւոյն վրայ, հավատալի կընեն հօրն աշխարհակալութիւնը, թէ և պարագաներն անծանօթ: Յոյն չաստուածոց այլ կողոպտելով ի Հայս բերելուն՝ մեծ հաւաստիք եղաւ մեր օրերուս…»[12]:

---

[10] *Տե՛ս* S t r a b o. XI, *14, 5 (528). Ստրաբոնի և Պլուտարքոսի թարգմանության տեքստերը վերցված են Հ. Մանանդյանի «Քննական տեսության հայ ժողովրդի պատմության…» աշխատանքից:*

[11] *Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. I, Երևան, 1971, էջ 526–537:*

[12] *Ղ. Ա լ ի շ ա ն. Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 38, ծան. 4:*

Հ. Մանանդյանը նույնպես նշում է, որ թեև «Աղբյուրների աղքատիկ ու պատահական տեղեկությունները չեն տալիս, իհարկե, պարզ ու լրիվ պատկեր՝ այն մեծ շրջադարձի, որ տեղի էր ունեցել Արտաշես Ա-ի ժամանակ: Սակայն կցկտուր հիշատակություններն անգամ ցույց են տալիս, որ Արտաշեսյան անկախ ու հզոր Հայաստանի կազմակերպումը սկիզբն էր Հին Հայաստանի պատմության նոր դարաշրջանի»[13]:

Արտաշես Առաջինի գլխավորությամբ Մեծ Հայքն այնքան հզորացավ ու ընդարձակվեց, որ դարձավ տարածաշրջանի հզոր տերություններից մեկը, որի հետ հաշվի էին նստում պատերազմական ընդհարումների և միջպետական հարաբերությունների ժամանակ: «Արտաշես Առաջինը Առաջավոր Ասիայի խոշորագույն պատմական դեմքերից մեկն է»[14]:

Արտաշես Առաջինը կատարեց արմատական մի շարք բարեփոխումներ՝ տնտեսական, ռազմական, մշակութային ոլորտներում: Մովսես Խորենացին Արտաշես Առաջինի մասին հաղորդած տեղեկություններում մատնացույց է անում, որ հայերը, որոնք «…մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին՝ որպէս հինից և ասպատակաց պարապեալք, և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք, զշաբաթուց ասեմ և զամսոց և զտարեաց բոլորմանց: Քանզի այսպիսի ինչ ճանաչիւր առ նոսա, այլոց ազ ազգուց վարելով. և ոչ ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք, և ոչ ի վերայ գետոց ճանապարհորդութիւնք, և ոչ գործիք ձկանց որսոց. այլ և ոչ յամենայն տեղիս երկրագործութիւնք, բայց դոյզն ուրեք. այլ ըստ օրինակի հիւսիսականաց կողմանց շաղղակերությամբ և այլովք այսպիսեօք կեցեալք: Եւ այս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի»[15]: Այսինքն՝ հայերն սկսել էին կուլտուրապես ավելի արագ զարգանալ շնորհիվ Արտաշես Առաջինի վերանորոգչական գործունեության».[16]

Մեր համոզմամբ՝ Հին Հայաստանում չորս կարևոր տոների սահմանումը պատկանում է Արտաշես Առաջինին: Այդ մասին վկայում է Մծբնեցին, երբ գրում է. «Սովորութի է մեծամեծ թագաւորաց որ է տարին չորս տոն կատարեն՝ նախ ծննդեան իւրեանց: Երկրորդ՝ յորժամ յաղթուի կատարեն: Երրորդ՝ յորժամ պսակեն զթագաւորն: Չորրորդ՝ յորժամ քաղաք շինեն»[17]: Արդ՝ այդօրինակ տոնակատարությունների արձագանք չէ Ագաթանգեղոսի Խոսրով թագավորի պարսիկների դեմ տարած հաղթանակին նվիրված նկարագրությունները. «Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ և բազում աւարաւ և ցնծալից ուրախութեամբ ի

---

[13] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության…, էջ 128:*

[14] *ՀԺՊ, հ. I, էջ 545–546, Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության…, էջ 127:*

[15] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի. II, ԾԹ:*

[16] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության…, էջ 134:*

[17] *Գիրք որ կոչի Զգոն արարեալ սրբոյն Յակոբոյ երիցս երանեալ հայրապետին Մծբին քաղաքի, ըստ խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսավորչի…, Հռոմ, 1756, էջ 731:*

կողմանսն Հայոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութեամբ և բարի անուամբ և բազում աւարաւ»: Այնուհետև՝ «Ապա հրաման տայր ընդ կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել, յեօթն բազինս մեհենից ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտաման: Սպիտակ ցլուք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորւովք, ոսկեղէն և արծաթեղէն զարդուք, ի վերջաւորս փողփողեալս, նշանակապ պալարակապ մետաքսիւքն և ոսկովք պսակօք և արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք ոսկով և արծաթով, ի հանդերձս պայծառս և ի զարդս գեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր: Նա և հինգերորդ ևս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարգևս քրմացն շնորհէր: Իսկ զօրացն որ զիւրեաւն էին՝ ետ պարգևս և արձակեաց յիւրմէ»[18]*:*

Մեծ Հայքի ընդարձակումից հետո, երբ երկիրը բազմամարդ դարձավ և հարստացավ, Արտաշես Առաջինը տնտեսական կարևոր բարեփոխումներ իրականացրեց: Հողերը բաժանեց և մարդահամար իրականացրեց: Մովսես Խորենացին այդ առիթով գրում է. «Յետ ամենայն առաքինութեանց և գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս զիւղից և ազարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս: Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպես. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, և պնակաձև փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. չորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ»: Նաև՝ «Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային և ոչ դաշտային, յաղագս շինութեան երկրիս»[19]*: Այդ են հավաստում նաև Արտաշես Առաջինի կանգնեցրած սահմանաքարերը, որոնք վկայում են նաև Արտաշես Առաջինի ծագումնաբանության և պատվատիտղոսների մասին: Դրանք հայտնաբերվել են Գեղարքունիք՝ Կարմիր, Ալբերդ, Վաղաշեն, Լիճք, Ծակքար և այլուր*[20]*, Զանգեզուր՝ Իշխանասար, Սիսիան-Գորիս ճանապարհ, Դիլիջանի և Իջևանի միջև Թեղուտ գյուղից, Սպիտակի մերձակայքից և այլուր: Կոթողները բազալտ քարից են՝ դեպի վեր լայնացող, վերևում երեք կլորավուն ատամներով, ներքևում քարի (ժայռի) մեջ ամրացնելու պոչուկով, որպեսզի ուղղահայաց դիրքով լինի: Հայաստանի արտաշիսյան սահմանաքարերի վրայի արամեերեն վիմագրերը նման են փոքրասիական արձանագրություններին*[21]*: Արամեերենը Հայաստանում եղել է պետական լեզու: Արամեերեն արձանագրությունների բովանդակությունն իրարից տարբերվում են: Այսպես՝ «Արտաշես արքան Զարեհի որդին Երվանդական բաժանեց հողը*

---

[18] *Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց (քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի), Երևան, 1983, 21, 22:*

[19] *Մ ո վ ս է ս Խ ո ր է ն ա ց ի. II, ԾԶ:*

[20] A. P e r i k h a n i a n. Les inscrintions, araméennes du roi Artachés.– “Revue des Etudes Arménienes”, Paris, 1971, Tome VIII, p. 169; *Գ. Տ ի ր ա ց յ ա ն. Արտաշես* I*-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն.– ՊԲՀ, 1977,* № *4, էջ 254–259:*

[21] А. Я. Б о р и с о в. Надписи Артаксия (Арташеса), царя Армении.– «Вестник древней истории» (далее – ВДИ), 1946, № 2, с. 98–100.

մասերի (բաժինների)»[22]: «Արտաշես արքա Երվանդունի վեհը, որդի Զարեհի, բաժանող հողը, այստեղ (այսինչ) գյուղի մեջ», «Արտաշես արքա «Բարի» Երվանդական Զարեհի որդի և թագադիր Նիկեփորը (կամ Նեկփառը) Ախշահրսարտի որդին»[23]: Այսինքն՝ Արտաշես Առաջինը հրամայում է հողաբաժանություն կատարել գյուղի մեջ և որոշել գյուղերի ու ագարակների սահմանները: Արձանագրություններից պարզ է դառնում, նաև, որ նա Զարեհի որդին է, իրեն համարում է Երվանդական, որ ինքն օրինական թագավոր է: Դրանցում, հելլենիստական մյուս երկրների թագավորների նման, նշվում է Արտաշես Առաջինի պատվատիտղոսները: Արտաշես Առաջինը Թեղուտի և Զանգեզուրի վիմագիր հիշատակարանների ընդարձակ տիտղոսաշարում իրեն անվանում է «թագակիր», «հաղթական», «իշխանությամբ օժտված»: Այս մակդիրը, Քսանթոսի եռալեզու արձանագրության (հունարեն, արամեերեն, լիկիերեն) հետ համադրելով, Վ. Լիվշիցը մեկնում է որպես Միհր-Ապոլոնի հովանավորության տակ գտնվող[24]:

Արտաշես Առաջինը տերության կայունության, անվտանգության, դավադրություններից զերծ պահելու համար կարգ է սահմանում, որ Այրարատում, մայրաքաղաքում, արքունիքում իրավունք ունի ապրել միայն թագաժառանգը: Մյուս արքայազններն ու հարազատները (սեպուհները) պետք է բնակվեին և հուղարկավորվեին մայրաքաղաքից հեռու՝ Վանա լճի հյուսիսային հատվածում՝ Աղի գետի ափին կառուցված Զարիշատ քաղաքում: Զատիշատին տրվել է «արքունի քաղաքի» կարգավիճակ և արևմտյան մասում քաղաքային տարածք[25]: Վերջինս «Աշխարհացույց»-ում հիշատակվում է Տավրուբերան «աշխարհի» գավառ. «Հայոց թագաւորէ Արտավազդ որդի Տիգրանայ: Սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր և զքորս ի գաւառս Աղուոյ ովտի և Առբերանոյ, թողլով ի նոսա զմասն արքունի որ ի շէնսն այնց գավառաց, հանդերձ առանձինն մտողացն Հայից և ռոճկաց, ըստ օրինակի ազգականացն որ ի կողմանս Հաշտենից. որպէս զի լինել նոցա պատուականագոյն և առաւել թագաւորազն քան զայնս Արշակունիս. միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ ի բնակութիւնս արքայի»[26]: «Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա և հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ, զի մի բնակեսցեն յԱյրարատ ի կալուածս արքայի. բայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա»[27]: «Եւ եկեալ առ նա կանխագոյն իւրոյ ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից՝ ասեն «Ընդարձակեա մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք

---

[22] *Գ. Տիրացյան. Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը.– ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1957, -10, էջ 107:*

[23] А. Г. Периханян. Арамейская надпись из Зангезура.– ИФЖ, 1965, ¹4, с. 107–127, рис. 1, 2.

[24] В. А. Лившиц. Трилингва из Ксанфа и надписи Артаксия.– VIII Всесоюзная конференция по Древнему Востоку, посвященная памяти акад. В. В. Струве. Тезисы докладов. М., 1979, с. 54–55; А. Г. Периханян. Материалы к этимологическому словарю древнеармянского языка, ч. I. Ереван, 1993, с. 6.

[25] *Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 33, 52:*

[26] *Մովսէս Խորենացի. II, ԻԲ:*

[27] *Նույն տեղում, II, ԿԱ:*

յոյժ»: Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի և Առբերանւոյ: Իսկ սոցա առաւել ևս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղ է մեզ՝ ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան. այլ հաստատեալ վճիռ որ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէինն՝ հաւասար տրոհել յինքեանս: Զոր բաժանեալ ըստ մարդաթուի՝ գտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառն, Աղիովտի և Առբերանւոյ»[28]: Հիշյալ երեք գավառներում՝ Հաշտյանքում, Աղիովտում և Առբերանում, բնակվելու էին Արշակունի սեպուհները (կրտսեր նախարարները), որոնք համարվում էին «սեպուհական» (սեպհական):

Երբ Գնելը խախտում է ընդունված կարգը և գնում է Կուաշ ական կուրացած պապի՝ Տիրանի մոտ, վերջինս նրան է տալիս իր ամբողջ ունեցվածքը և կարգադրում ապրել Կուաշ ավանում, որը գտնվում է Այրարատում: Դա հաղորդում են Արշակին և ասում, որ Գնելն ուզում է սպանել նրան: Արշակը, հավատալով Տիրիթին «… Վարդանին ուղարկում է Գնելի մոտ. թե «ընդէ՞ր բնակեցար յԱյրարատ և լուծեր զկարգ հայրենեաց (Քանզի սովորութիւն էր՝ արքայի միայն բնակել յԱյրարատ և միոյ որդւոյ նորա, զոր փոխանորդ թագաւորի պահէին, և այլոց Արշակունեաց բնակելի ի գաւառս Հաշտենից և Աղիովտի և Առբերանւոյ, հանդերձ ռոճկօք և մտիւք յարքունուստ): Եւ արդ՝ ընտրելի է քեզ կամ ընդունել զմահ, կամ գնալ յԱյրարատայ, և արձակել ի քէն զուստերս նախարարացդ»: Զայս լուեալ Գնելոյ՝ արար զհրամանս արքայի և գնաց յԱղիովիտ և յԱռբերանի»[29]:

Սպանությունից հետո Գնելին թաղում են Զարիշատում. «Իսկ Արշակայ հանդերձ նախարարօքն իջուցեալ ի դաշտն Աղիովտի զդին Գնելոյ թաղեաց յարքունական քաղաքին Զարիշատի. ի չքմեղս եղեալ՝ կոծ առնէ»[30]: Հնարավոր է, այդ ավանդույթը գալիս է դեռևս ուրարտական շրջանից, որը շարունակվել է Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների օրոք, հավաստի է, որ, ինչպես վերը նշեցինք, այդ կարգը սահմանվել է Արտաշես Առաջինի կողմից: Զարիշատը Արտաշես Առաջինի կառուցած քաղաքներից էր, որն իր հոր անունով կոչեց Զարիշատ:

Արտաշես Առաջինի թաղման պատկերավոր նկարագրությունից հետո Մովսես Խորենացին գրում է. «Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա, և հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ, զի մի բնակեսցեն յԱյրարատ ի կալուածս արքայի»[31]: Այնուհետև՝ «Պատմի և այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարման յուղարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխիւ ի Հայս յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառսն զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ: Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս, իբր թագաւորական արմս»[32]: Այս վկայությունը հիշեցնում է Զարիշատ քաղաքին, քաղաքային տարածքին և բնակիչներին տրված կարգավիճակը: Արցախի

---

[28] *Նույն տեղում, II, ԿԲ:*
[29] *Նույն տեղում, III, ԻԲ:*
[30] *Նույն տեղում, III, ԻԳ:*
[31] *Նույն տեղում, II, ԿԱ:*
[32] *Նույն տեղում, I, Լ:*

Տիգրանակերտի «արքունի քաղաքի» կարգավիճակը մեկ անգամ ևս վկայում է, որ տիրակալ արքայի հարազատները բնակվելու էին Այրարատ գավառից հեռու: Բնականաբար, այդ բարեփոխումը եղել է մինչ Տիգրան Մեծը[33]: Կասկածից վեր է, որ այն Արտաշես Առաջինի բարեփոխումներից է:

Թե որքան կարևոր է եղել քաղաքաշինությունը, քաղաք հիմնադրելը, որի առթիվ տոն է սահմանվել, ինչպես վերը նշեցինք, հավաստում է Մծբնեցին: Այդ է վկայում նաև Արտաշես Առաջինի քաղաքաշինական գործունեությունը: Իր հոր անունով նա կառուցել է մի շարք քաղաքներ [Արտաշատ, Արշատ (Նախիջևանում՝ Երասխի (Արաքսի) ափին, ժամանակակից Շախթախտի], Նորշիրականի Զարեհավանը, Բագրևանդի Զարեհավանը, Հավնունիքի Զարեհավանը, Աղիովիտի Զարիշատը, Վանանդի Զարիշատը և այլն[34]:

Արտաշես Առաջինին փառաբանության խոսքեր է նվիրել IX դ. մատենագիր Թովմա Արծրունին: Պատմիչը, որ երկնելու էր «Արծրունյաց տան պատմությունը», սակայն, Մովսես Խորենացու նման ներկայացնում է Հայոց պատմությունը սկզբից մինչև իր ապրած տարիները: Թովմա Արծրունին հաղորդում է, որ Արտաշեսը շինարարական աշխատանքներ է կատարել Վանում. «Իսկ շուրջ զբերդանման ապարանօքն՝ պարսպէ զբլուրն շուրջանակի յապառաժուտ տաշելոց քարանց, քաղաք ամենալից զհովիտն ամրացուցանելով»: Այնուհետև՝ «Իսկ ըստ բաւականութեան աչաց տեսութեանց դաշտավայրին ի մուտս կոյս, և առ եզերբ ծովուն պարսպաւորս յօրինէ զգոգն՝ լնուլ այգեստան տնկախիտ պտղաստութեամբ ականախիտ վայելչութեամբ»: Ասում է. «Եւ իբրև կատարեաց զյօրինուած շինութեան քաղաքին և անմատչելի անկասկածելի զամրոցն պատրաստեաց՝ կոչեաց զանուն ամրոցին Զարդ, այսինքն պայծառութիւն ի վերայ պայծառայարդար շինուածոյն: Եւ ածեալ զտիկինն Սաթինիկ զբօսնուլ յաշնանային յեղանակս յամարաստուն գեղեցկաշէն յապարանս զարդարեալ բերդին»: Այնուհետև՝ «Իսկ զանուն քաղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակերտ, կամ թէ Արտաշէսի եկք, զի ըստ Պարսիկ ձայնի Մատ՝ Եկք թարգմանի[35]:

Արտաշես Առաջինի կարևորագույն արարումներից մեկը միավորված Հայաստանի նոր մայրաքաղաքի՝ Արտաշատի հիմնադրումն էր:

Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը հիշատակում է Մովսես Խորենացին. քաղել է «ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան-շինել քաղաքն»: Այսինքն՝ Արտաշեսյան շրջանի կարևոր իրադարձություններն պատմվել են վիպասանների կողմից («որ պատմին ի Գողթան») և սերնդե սերունդ վերաձայնվելով՝ հասել V դար: Մանուկ Աբեղյանը գրում է. «Այդ դարերում արդեն Արտաշեսի տերությունը ձգտել և հաջողել է առաջ բերել Հայաստանի զանազան մասերի միացում, և Արտաշատը դարձել

---

[33] *Ժ. Խաչատրյան, Ն. Հակոբյան. «Արքունի քաղաք» Զարիշատի տեղադրությունը.– «Էջմիածին», 2007, Թ, էջ 51:*

[34] *Ս. Տ. Երեմյան. նշվ. աշխ., էջ 33, 52:*

[35] *Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 53–54:*

է ընդհանուր կենտրոն: Դրա համապատասխան և Արտաշեսի շուրջը խմբված պատմական երգերն ու զրույցներն իրենց մեջ ընդունելով և այլ ավանդություններ, ձգտել են «համազգային» դառնալու, այդպիսով առաջ է եկել մի ընդհանուր վիպասանություն: Հայոց հին Վիպասանքը, ուրեմն կազմվել ու զարգացել է Հայաստանի կենտրոնական իշխանության առկայությամբ: Երկրի իշխանության միավորումը առաջ է բերել և վիպական նյութերի մեկտեղում: Այդ անհրաժեշտ է եղել Արտաշատի թագավորների համար»[36]: «Դարեր շարունակ խաղաղ ու միակերպ ապրելուց հետո՝ հայ ժողովուրդն ապրում է իսկապես մի եռուն դյուցազնական շրջան, որի պատմական նշանավոր անձերն ու դեպքերը՝ Արտաշես Առաջինն իր հիմնած թագավորությամբ, Մեծն Տիգրանն իր անձով և մյուս Արտաշեսները ու Արտավազդները և Տրդատ Ա. իր նախորդներով նյութ են դառնում ժողովրդական վեպի ու զրույցի և երգվում հին երգիչներից»: «…պատմական-առասպելական երգերի ու զրույցների երկու մեծ շրջան. նախ՝ Հայոց վիպասանություն, Երգք առասպելաց կամ վիպասանաց (այլն թուելեաց), որի կենտրոնն հանդիսացել են Մեծն Արտաշեսն ու Տիգրանը»[37]:

Մովսես Խորենացին Հայոց պատմության պատմական իրադարձությունների մասին տեղեկությունները քաղել է ոչ միայն Գողթան երգիչներից. պատմիչը հիշատակում է ավելի քան քառասուն աղբյուր[38]:

Սասանյան Պարսկաստանը IV և V դդ. ագրեսիվ քաղաքականություն էր վարում Հայաստանի նկատմամբ: 360-ական թվականներին Շապուհ Երկրորդն ավերում է Հայաստանի քաղաքները: Պարսկաստանին հաճախ միանում էին նաև հայ նախարարները: 450–451 թթ. Հազկերտ II-ը պահանջեց նախարարներին (ժողովրդին) հրաժարվել քրիստոնեական կրոնից և ընդունել զրադաշտականություն:

Երկիրը կանգնել էր պատերազմի առաջ: Թեև վեց հարյուր հիսուն տարի աշխարհակալ արքա Մեծն Արտաշեսը չկար, բայց վիպասանները, Գողթան երգիչները շարունակում էին ասերգել անկախ Հայաստանի և Մեծն Արտաշեսին փառաբանող երգեր: Արտաշես Առաջինի մայրաքաղաք Արտաշատը թեև քանիցս ավերվել էր, սակայն շարունակում էր մնալ Հայաստանի մայրաքաղաք և նրա հզորության խորհրդանիշ: Պատահական չէ, որ Հազկերտին պատասխան գրելիս նախարարներն ու հոգևոր առաջնորդները մեկտեղվեցին Արտաշատում[39]: Ինչպես Եղիշեն է շեշտում՝ «միաբանք և միահաւանք, միահամուռ ժողովեալքի թագավորանիստ տեղին յԱրտաշատ*, հաւանութեամբ մեծամեծ նախարարացն և ամենայն բազմութեամբ աշխարհին արարին նամակին պատասխան»[40]:*

Խորհրդանշական է նաև այն, որ Վարդան Մամիկոնյանի կազմած նոր կառավարության մայրաքաղաքը Արտաշատն էր: Պատահական չէ, որ

---

[36] *Մ. Աբեղյան. Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 156–161, 164–179:*

[37] *Մ. Աբեղյան. Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 315:*

[38] *Մովսես Խորենացի. Հայոց Պատմություն, մատենաշար, պատասխանատու ձեռագրագետ Ա. Մաթևոսյան, Երևան, 1997, էջ 3–33:*

[39] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց: Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982, ԻԳ:*

[40] *Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 28:*

հայկական զորքերը պարսկական բանակին դիմակայելու համար հավաքվեցին Արտաշատում: Տեղի ունեցավ զորատեսակների ստուգատես, և Վարդան Մամիկոնյանը, հանդիսավոր դիմելով զորքերին, քաջալերող ճառ է արտասանում, որն ավարտվում է ոգեկոչող բառերով. «Երկիւղ՝ թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք ի մէնչ վաղ մերժեցաք, ընդ նմին և երկիւղն փախիցէ ի մտաց և ի խորհրդոց մերոց»[41]:

ВЕЛИКИЙ АРТАШЕС I НА СТРАНИЦАХ АРМЎЯНСКОЙ ИСТОРИИ

ЖОРЕС ХАЧАТРЯН

Резюме

После Магнеской битвы в 189 г. до н. э. создание нового независимого государства во главе с Арташесом I (189–160 гг. до н. э) был решающим для армянской истории. Во времена царя Арташеса I в Армянском нагорье формировалась Великая Армения. Она включала территории от Северного Междуречья до реки Кура, от Атропатены до Софены и Малую Армению. Арташес I провел реформы в областях экономики, военного дела, культуры. Исходя из характеристик греческих и латинских историков, Гевонд Алишан считает Арташеса I царем-владыкой. Акоп Манандян отмечает, что формирование независимой и могучей арташесидской Армении стало началом новой эпохи в истории Древней Армении. Во главе с Великим Арташесом I Великая Армения набрала большую мощь и расширилась, став одним из могучих государств региона. Арташес I установил четыре важных праздника: день рождения царя, день победы, день бракосочетания царя и день строительства города. Для стабильности и безопасности страны, во избежание заговоров Арташес I установил правило: в столице Арташат может жить только наследник трона, остальные принцы и родственники должны жить и быть захороненными вдали от столицы, в городе Заришат, севернее озера Ван, у которого был статус «дворянского города». На каменных росписях, определяющих границы страны, Арташес I называл себя победоносным, властным царем. В. Лившиц, сравнивая этот эпитет с надписями Ксантоса (на трех языках: греческий, арамейский, ликейский), полагает, что Арташес I был под покровительством Аполлона. Повествования об Арташесе I и о событиях его времени дошли до V в. и нашли свое отражение в «Истории Армении» Мовсеса Хоренаци.

GREAT ARTASHES THE FIRST IN THE PAGES OF ARMENIAN HISTORY

ZHORES KHACHATRYAN

Summary

After the battle of Magnessia In 189 B.C. the establishment of new independent state, led by Artashes the First (189–160 B.C.), was a big coup for the Armenian history. At the time of king Artashes

[41] *Նույն տեղում, էջ 104:*

the First Great Armenia was formed in the Armenian Highland. It included the area from Northern Mesopotamia to the river Kura, from Atropatene to Sophene and Lesser Armenia. Artashes the First made reforms in the following fields: economy, military affairs, culture of the Armenian people. Based on the characteristics of Greek and Latin historians, Ghevond Alishan considers Artashes the First a king - conqueror. Hakob Manandyan notes that the establishment of an independent and powerful Artashesids' Armenia was the beginning of a new era in the history of ancient Armenia. Headed by Great Artashes the First Great Armenia gained so much power and was so expanded, that it became one of the mighty states of the region. Artashes the First established four major holidays: the birthday of the king, victory day, king's wedding day and city construction day. For the stability and security of the country, in order to avoid plots Artashes the First founded a rule, that only the heir of the throne could live in the capital, the other princes and relatives had to live and be buried away from the capital, in the city of Zarishat, north of lake Van, which had the status of "a royal city". In determining the boundaries of rock paintings of the country, Artashes the First called himself a victorious and powerful king. V. Livshits, comparing this epithet with inscriptions of Xanthos (in three languages: Greek, Aramaic, Likian) explained, that Artashes the First was under the auspices of Apollo. Narratives about Artashes the First and about the events of his time have reached the 5th century and were reflected in the records of "The history of Armenia" after Movses Khorenatsi.